

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ  
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Հարությունյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Նախագծում բարձրացված հարցադրումները հիմնականում իրավաչափ են, սակայն դրանց մի մասի իրավական լուծումները չեն կարող հիմնավորված համարվել հետևյալ նկատառումներով:

1. Նախագծի վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավական ակտի կասեցման տակ հիմնականում նկատի են ունեցվել սահմանադրական դատարանի կողմից «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված կարգով իրավական ակտի կասեցման դեպքերը: Իսկապես, սահմանադրական դատարանի կողմից իրավական ակտը կասեցնելն անվիճելի հիմք է գործի վարույթը կասեցնելու համար, սակայն հարկ է նկատել, որ իրավական ակտի գործողության կասեցման ոչ բոլոր դեպքերն են հիմք՝ վարույթը կասեցնելու համար: Այսինքն, իրավական ակտի գործողությունը միշտ չէ, որ կասեցվում է դրա իրավաչափությունը վիճարկելու հիմքով:

Այսպես, համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի՝ իրավական ակտի գործողության կասեցման Eզ..24.12.2009-i nist

մասին իրավական ակտով պարտադիր պետք է սահմանվեն «մինչև իրավական ակտի գործողության կասեցումը և դրա գործողության վերականգնումից հետո ծագած հարաբերությունների կարգավորման կարգը և պայմանները»: Բնական է, որ իրավական ակտի գործողությունը կասեցնող իրավական ակտով կարող են սահմանվել այնպիսի դրույթներ, որոնք բնավ չեն բացառում կասեցված իրավական ակտի կիրառման ժամանակ ծագած հարաբերությունների այնպիսի կանոնակարգում, որը սպառիչ լուծում է տալիս արդեն իսկ ծագած հարաբերություններին:

Այսպիսով, համակարծիք լինելով օրինագծի հիմնադրույթի հետ, առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի նոր 6-րդ կետը շարադրել հետևյալ ձևակերպմամբ. «կասեցվել է քրեական գործով վարույթում կիրառման ենթակա իրավական ակտի գործողությունը, եթե այդ իրավական ակտի գործողությունը կասեցնելու մասին իրավական ակտով չեն սահմանվել մինչև դրա գործողության կասեցումը ծագած հարաբերությունների կարգավորման կարգ ու պայմաններ»:

Բացի դրանից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիշյալ հիմքը մասնավոր բնույթ ունի ի տարբերություն 5-րդ կետով ամրագրվածի, առաջարկում են թվագրել 4<sup>1</sup>:

2. Նախագծի 2-րդ մասի դրույթները ևս ընդունելի են, սակայն ներկայացված խմբագրությունը համահունչ չէ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ կետի հիմնադրույթներին: Խնդիրն այն է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանադրական դատարան դիմելն ամրագրված է ոչ թե որպես պարտականություն, այլ որպես որևէ նախապայմանով չթելադրված իրավունք, մինչդեռ նախագծից բխում է, որ գործի վարույթը կասեցնելն իրավունք է, իսկ այդ իրավունքից օգտվելիս վարույթը կասեցնելու դեպքում արդեն դատավորը պարտավոր է դիմել սահմանադրական դատարան:

Բացի դրանից, հարկ է նկատի ունենալ, որ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Դատարանները Eզ..24.12.2009-ի nist

սահմանադրական դատարանն ղիմելուց առաջ պարտավոր են, իսկ գլխավոր դատախազը կարող է կասեցնել կոնկրետ գործի վարույթը մինչև սահմանադրական դատարանի ընդունած որոշումն ուժի մեջ մտնելը»։ Ընդ որում, նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն, վարույթը կասեցնելու դեպքում, դատավորը ոչ թե պարտավոր է, այլ կարող է դիմում ներկայացնել սահմանադրական դատարան։

Կարծում ենք, որ այս նկատառումներով հանդերձ, այդ հարաբերություններն առավել համարժեք են կանոնակարգված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 2-րդ մասով, որտեղ ինչպես վարույթը կասեցնելը, այնպես էլ սահմանադրական դատարանն ղիմելն ամրագրված է որպես իրավունք։ Այս դեպքում չի խախտվում նաև «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի նշված դրույթը, քանի որ դատարանն իր հայեցողությամբ լուծում է սահմանադրական դատարանն ղիմելու անհրաժեշտությունը, իսկ ղիմելիս անխուսափելիորեն կկասեցնի վարույթը, քանի որ դա համարվում է սուսկ ղիմելու սահմանված ընթացակարգ, ինչը կարծում ենք բնավ չի սահմանափակում դատարանի սահմանադրական իրավունքը։

Այսինքն, «Եթե կասեցրել է, ապա պարտավոր է ղիմել» մոտեցման փոխարեն առաջարկում ենք հետևյալ մոտեցումը՝ «իրավունք ունի ղիմել՝ կասեցնելով վարույթը»։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված նախագիծն ընդունելի կհամարի ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում։

Միաժամանակ հայտնում ենք, որ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում նախագիծը քննարկելիս, հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը։

Հարգանքով՝

Տիգրան Սարգսյան

Պ-768-17.11.2009-ՊԻ-010/0

Նախագիծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԵՆԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐԸՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 31-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) կասեցվել է քրեական գործով վարույթում կիրառման ենթակա իրավական ակտի գործողությունը.».

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Քրեական գործով վարույթը դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդության հիման վրա դատարանի որոշմամբ կարող է կասեցվել, եթե դատարանը գտնում է, որ կիրառման ենթակա որևէ մորմատիվ ակտի դրույթ հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Գործի վարույթը կասեցվելու դեպքում դատարանը «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով դիմում է սահմանադրական դատարան:»:

3) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

4) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքով կասեցված գործով վարույթը վերսկսվում է, եթե՝

1) մինչև սահմանադրական դատարանում գործի դատաքննությունը սկսվելը դատարանը հետ է վերցրել իր դիմումը.

2) սահմանադրական դատարանի աշխատակազմը վերադարձրել է դատարանի դիմումը և դատարանը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի բողոքարկել սահմանադրական դատարանի նախագահին կամ բողոքարկելուց հետո՝ սահմանադրական դատարանի նախագահը դատարանի դիմումը վերադարձնելու մասին վերջնական որոշում է կայացրել.

3) սահմանադրական դատարանը կարճել է գործի վարույթը.

4) սահմանադրական դատարանն ամբողջությամբ մերժել է գործի քննությունը, բացառությամբ այն դեպքի, երբ դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում իրականացվում է գործի դատաքննություն.

5) ուժի մեջ է մտել կիրառման ենթակա նորմատիվ ակտի դրույթը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող կամ հակասող և անվավեր ճանաչելու մասին սահմանադրական դատարանի որոշումը:»:

**Հոդված 2.** Մույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: